«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» 50-ԱՄՅԱԿԸ

ԶԱՔԱՐՅԱՆ Ա. Հ.

1950-ական թվականների II կեսից Խորհրդային Միությունում սկսված քաղաքական ձնհալը, նախորդ տասնամյակներում իրենց հիմքերը դրած տնտեսության աճը, ժողովրդի մտավոր ընդհանուր մակարդակի վերելքը՝ դպրոցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական հիմնարկների լայն ցանցի ստեղծումը, նպաստավոր պայմաններ էին ապահովում գիտությունների, այդ թվում նաև հայագիտության առաջընթաց զարգացման համար: Պատմաքաղաքական նման բարենպաստ պայմաններում միայն հնարավոր դարձավ 1958 թ. իրագործել հայագիտական նոր պարբերականի հիմնադրումը՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ղեկավարության և անվանի հայագետների ջանքերով:

«Պատմա-բանասիրական հանդեսի» առաջին համարը բացվում էր «Խմբագրության կողմից» նախաբանով, որտեղ ներկայացված էին պարբերականի հետապնդած ծրագրային նպատակներն ու խնդիրները: Արձանագրելով, որ «ինչպես գիտության բոլոր մյուս ճյուղերում, այնպես էլ պատմաբանասիրական գիտությունների բնագավառում տակավին կան շատ չլուսաբանված պրոբլեմներ, գիտական մանրազնին ուսումնասիրության և արդիականության դիրքերից վերագնահատման կարոտ բազմաթիվ հարցեր», նախաբանում նշվում էր, որ հենց նման խնդիրների քննարկման ու լուծմանն օժանդակելու համար է կյանքի կոչվում այս պարբերականը: Այնուհետև մասնավորեցնելով թվարկվում են այն բնագավառները, որոնց ուսումնասիրությունն առաջնային պետք է լիներ պարբերականի համար. «Պատմա-բանասիրական հանդես»-ի էջերում կլուսաբանվեն հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, փիլիսոփայության, արվեստի և կուլտուրայի այլ բնագավառների հարցերը և ընդհանրապես հայագիտության տեսական խնդիրները, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կապերը մյուս ժողովուրդների հետ: Հանդեսը լայնորեն կլուսաբանի Սովետական Հայաստանի գիտական և կուլտուրական նվաճումները: Գիտական պրոբլեմների քննարկմանը... նպաստելու նպատակով Հանդեսը կունենա գիտական քննարկումների բաժին, որը կօժանդակի ստեղծագործական բանավեճերի ծավալմանը: Նա կունենա նաև բնագրերի հրապարակման, գրախոսությունների, գիտական լուրերի



ու տեղեկությունների բաժիններ»: Հանդեսի կարևորագույն խնդիրներից է համարվել նաև արտասահմանի հայ ընթերցողներին Հայաստանի գիտահետազոտական հիմնարկների աշխատանքներին ծանոթացնելը, ինչպես նաև խորհրդային ընթերցողներին արտասահմանյան հայագետների աշխատանքների մասին տեղեկատվություն հաղորդելը: Պարբերականի գլխավոր նպատակն է՝ հանդեսի շուրջ համախմբել խորհրդային ու արտասահմանյան հայագետներին և միացյալ ուժերով նպաստել հայագիտության հետագա զարգացմանը:

Ծրագրային ահա նման խնդիրներ է հետապնդել նոր հիմնադրված հանդեսը, և առաջ անցնելով նշենք, որ 50 տարիների ընթացքում պարբերականի խմբագրությունը դա կատարել է գերազանց:

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ ստեղծված պարբերականի խմբագրական կոլեգիայի կազմի մեջ ընդգրկվեցին անվանի պատմաբաններ ու բանասերներ Աշ. Հովհաննիսյանը, Ս. Երեմյանը, Լ. Խաչիկյանը, Բ. Առաքելյանը, Ա. Ղարիբյանը, Ս. Արևշատյանը և այլք: Հանդեսի գլխավոր խմբագիր նշանակվեց անվանի պատմաբան, ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, որը շուրջ 40 տարի անընդմեջ, բոլորանվեր ղեկավարեց հանդեսի աշխատանքները, և որի եռանդուն ջանքերով հանդեսը դարձավ միջազգային ճանաչում ունեցող հայագիտական ամենահեղինակավոր պարբերականը: Հետագա տարիներին հանդեսի խմբագրական կոլեգիայի կազմը համալրվում ու թարմացվում է նորանոր անդամներով՝ հայագետներով ու արևելագետներով՝ Բ. Պիոտրովսկի, Ի. Աբուլաձե, Վ. Բընբցյանու, Ա. Ղանալանյան, Կ. Ղաֆադարյան, Գ. Ջահուկյան, Էդ. Ջրբաշյան, Գ. Սարգսյան, Գ. Բրուտյան, Էմ. Պիվազյան, Հր. Բարթիկյան և ուրիշներ: Հանդեսի հիմնադիր և գլխավոր խմբագիր Մ. Ներսիսյանի մահից հետո այդ պաշտոնը 1999 թ. վստահվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, նշանավոր հայագետ Վարդգես Միքայելյանին: Վերջինիս մահից հետո՝ 2005 թ., հանդեսի մեկ համար լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր Պարույր Մուրադյանի, մեկն էլ՝ բանասիրական գիտությունների դոկտոր *Անուշավան Զաքարյանի խմբագրությամբ: 2006 թ. հանդեսի խմբագիր է ընտրվել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, անվանի բանագետ-բանասեր Սարգիս Հարությունյանը:*

Հանդեսի առաջին համարից ձևավորված և տարիներ ի վեր նույնությամբ պահպանված բովանդակային կառուցվածքը՝ բաժիններն ու ենթաբաժինները («Հոդվածներ», «Հաղորդումներ», «Բանավեճեր», «Պատմամշակութային ակնարկներ», «Հրապարակումներ», «Գրախոսություններ», «Մփյուռքահայ կյանք», «Մեր հոբելյարները», «Լրատու», «Գիտական ինֆորմացիա»), հետագայում ենթարկվել է որոշ լրացումների ու ճշգրտումների:

Պարբերականում նյութերը հրատարակվում են հայերեն և ռուսերեն՝ համապատասխան լեզուներով ամփոփումներով: Հետագայում դրանց կցվեցին անգլերեն լեզվով ամփոփումներ, որի շնորհիվ այդ նյութերի ընդհանուր բովանդակությունը մատչելի է դարձել օտարալեզու ընթերցողներին: 1500-2400 տպաքանակով երկլեզու պարբերականը հիմնա-

դրման օրից տարածել է ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Այսօր թեև նվազել է հանդեսի տպաքանակը (350 օրինակ), սակայն, ինչպես և անցյալում, այն հասնում է իր ընթերցողներին աշխարհի տարբեր ծագերում: Ի դեպ, մինչև 1990 թ. տարեկան հրատարակվել է հանդեսի 4 համար, 1991–1997 թթ.՝ 1 կամ 2, մինչև 2000 թ. եղել են միացյալ համարներ, իսկ 2000 թ. առ այսօր տարեկան հրատարակվում է 3 համար: Այսինքն՝ եռամսյա հանդեսից վերածվել է քառամսյայի:

50 տարիների ընթացքում լույս է տեսել «Պատմա-բանասիրական հանդեսի» 176 մեծադիր համար՝ յուրաքանչյուրը 15–20 մամուլ ծավալով, միջին հաշվով ամեն համարում զետեղվել է 25 անուն նյութ, այսինքն՝ իր գոյության ընթացքում այստեղ տպագրվել է շուրջ 4.800 միավոր:

1983 թ. հայերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսավ «Պատմա-բանասիրական հանդեսի» 1958–1982 թթ. մատենագիտական ցանկը: Ցանկի հրապարակումների քանակը՝ 2828 միավոր, ներկայացնում է քառորդ դարի ընթացքում հայագիտական և դրան առերսվող գիտական այլ բնագավառների զարգացման ուղղություններն ու գիտահետազոտական գործընթացները:

«Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում հայ և օտարազգի մասնագետների կողմից հայերեն ու ռուսերեն հրատարակվել են հոդվածներ, հաղորդումներ և գիտատեղեկատվական նյութեր, որոնք վերաբերում են հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների պատմության, գրականության, լեզվի, բանահյուսության, ազգագրության, հնագիտության, վիմագրության, փիլիսոփայության, իրավունքի, արվեստների, ճարտարապետության այլևայլ խնդիրների քննությանը, նաև Հայաստանում, Սփյուռքում ու արտասահմանում տեղի ունեցած գիտական ու մշակութային կարևոր իրադարձություններին, հայագիտական հրատարակություններին: Այն համակողմանիորեն լուսաբանել է նաև հայկական գաղթավայրերի պատմամշակութային կյանքը: Հանդեսը ծանրակշիռ ներդրում ունի արևելագիտական, կովկասագիտական, բյուզանդագիտական ուսումնասիրությունների ասպարեզում: Ընդհանուր մշակութաբանական և պատմաբանասիրական հետաքրքրություն ներկայացնող խնդիրները ևս մշտապես գտնվել են հանդեսի ուշադրության կենտրոնում, որով առավել ընդլայնվել է նրա գիտական տեսադաշտը՝ այն դարձնելով գիտական լայն ընդգրկումների պարբերական: Այս տեսակետից դարձյալ հարուստ են հրապարակումների, գրախոսությունների և գիտական տեղեկատվության բաժինները, որտեղ պարբերաբար հրատարակվում են գիտության և մշակույթի ականավոր դեմքերի անտիպ նամակներ, արխիվային տարբեր բնույթի վավերագրեր, աշխարհում հայագիտական, արևելագիտական և ընդհանուր մշակութաբանական արժեք ներկայացնող կարևոր հրատարակությունների մասին գրախոսականներ: Միանշանակ կարելի է արձանագրել, որ «Պատմա-բանասիրական հանդեսում» տպագրված նյութերն առանձնանում են աղբյուրագիտական և պատմագիտական հարուստ ու բազմաշերտ հենքով:

Հանդեսի գործունեությանը տարբեր տարիների իրենց ակտիվ մասնակցությունն են բերել Անդրկովկասի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլ-

դովայի, Եվրոպայի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների, Ամերիկայի հայ ու այլազգի բազմաթիվ գիտնականները: Այսպես, օրինակ, օտարազգի գիտնականներից հանդեսին աշխատակցել են. Բուլղարիայից՝ Դ. Անգելովը, Վ. Գյուզելևը, Չեխոսլովակիայից՝ Լ. Մոտալովան, Ռումինիայից՝ Վ. Բրնըցյանուն (երկար տարիներ եղել է նաև խմբագրական կոլեգիայի անդամ), Իտալիայից՝ Ջ. Բոնֆանտեն, Վ. Պիզանին, Պ. Կունեոն, Ա. Ալպագո-Նովելլոն, Ֆրանսիայից՝ Ֆ. Ֆեյդին, Ժ.-Պ. Մահեն, ԱՄՆ-ից՝ Ռ. Թոմսոնը, Ջ. Գրեպինը, Ռ. Յակոբսոնը, Հոլանդիայից՝ Ս. Մայքլը, Մ. Սթոունը, Բելգիայից՝ Ջ. Վայտենբերգը, Հունգարիայից՝ Է. Շյուցը, Ժ. Տրոչանին, Գերմանիայից՝ Հ. Վալտեր Պոլը, Ռուսաստանից՝ Վ. Տոպորովը, Օ. Շիրոկովը, Տ. Իզմայլովան, Ա. Տերեշչենկոն, Ուկրաինայից՝ Ի. Կրիպյակևիչը, Ն. Ռաշբան, Ս. Ավերբուխը, Ա. Զինչենկոն, Ս. Յա. Դաշկևիչը, Վրաստանից՝ Ի. Աբուլաձեն (եղել է նաև խմբագրական կոլեգիայի անդամ), Դ. Չխիկիշվիլին, Գ. Մելիքիշվիլին և շատ ուրիշներ: Հեղինակների՝ նման մեծ ընդգրկումը մի կողմից վկայում է հանդեսի միջազգային լայն ճանաչման, մյուս կողմից՝ նրա գիտական բարձր վարկի ու հեղինակության մասին: Վերջինս իր արտահայտությունն է գտել նաև տարբեր երկրներից անվանի գիտնականների՝ պարբերականի խմբագրությանը հղած նամակների գնահատականներում: «Պատմա-բանասիրական հանդեսը» մեծապես արժեքավորել են Հ. Վ. Պոլը, Հ. Օրբելին, Վ. Մինորսկին (Լոնդոն), Կ. Մելիք-Օհանջանյանը, Հ. Սիրունին (Բուխարեստ), Հ. Արմենը, Հ. Շայյանը (ԱՄՆ), Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների ներկայացուցիչները և շատ ուրիշներ: Հայտնի փաստ է հետևյալ իրողությունը. ակադեմիկոս Հովսեփ Օրբելին 1960 թ. հուլիսի 28-ին խմբագրությանը հղած իր նամակում «Պատմա-բանասիրական հանդեսը» գնահատում էր որպես «լրջագույն ակադեմիական ամսագիր», որի ասպարեզ իջնելը պայմանավորվում էր հասարակական անհրաժեշտ նախադրյալներով. «Բնութագրական է, որ անցյալի իրողությունների նկատմամբ սրվող հետաքրքրությունը ի հայտ է գալիս առաջընթացի ամենաինտենսիվ ժամանակներում: Ստեղծելով իր ապագան և ներկան, ժողովուրդը ձգտում է արժեքավորել իր անցած ուղին, և թափով զարգացող ինքնագիտակցությունն անխուսափելիորեն խթանում է սրված հետաքրքրությունն անցյալի դարաշրջանների հանդեպ»:

Գաղտնիք չէ, որ հանրապետության գիտական հանդեսները վերջին մեկուկես տասնամյակում մեծ դժվարությունների առջև են հայտնվել՝ ստիպված լինելով հաղթահարել բազմաթիվ ու բազմաբնույթ խոչընդոտներ՝ սկսած ֆինանսական սղությունից մինչև հրատարակության պարբերականության պահպանում, տպաքանակի նվազում, անգամ՝ հոդվածների հայթայթման ու պատվիրման հետ կապված օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ: Անկախ հասարակական-քաղաքական վայրիվերումներից առաջացած վերոթվարկյալ խոչընդոտներից, «Պատմա-բանասիրական հանդեսը» աշխատել է բարձր պահել իր գիտական հեղինակությունը, ինչն ամենաբարդն է մեր իրականության մեջ: Այս դժվարին ժամանակներում անհրաժեշտ է պահպանել ու բարձրացնել հանդեսի գիտական մակարդակը, ժամանակն է երիտասարդ ուժեր ներգրավել խմբագրական

կոլեգիայի կազմի մեջ, ավելի համարձակորեն վերանայել պատմագիտության ու բանասիրության մեջ տեղ գտած հին ու կարծրացած տեսակետները և պատկերացումները, ըստ այդմ՝ զարկ տալ բանավիճային ժանրին ու քննարկումներին: Պատմաբանասիրական քառամսյա հանդեսի խմբագրությունը պատվով հաղթահարում է բոլոր փորձությունները, անշուշտ, մեծապես ունենալով «Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի» և նրա հայկական բաժանմունքի դեկավար, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Զավեն Եկավյանի ֆինանսական հովանավորությունն ու աջակցությունը: Այդ օժանդակության շնորհիվ է, որ խմբագրությունը ձեռնամուխ է եղել հանդեսի 1983–2007 թթ. մատենագիտության կազմմանն ու հրատարակությանը: Այդ գործը հաջողությամբ ավարտին է հասցվում և, հուսով ենք, որ հանդեսի 50-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների օրերին այն կդրվի գիտական հասարակայնության սեղանին:

Ի մի բերելով «Պատմա-բանասիրական հանդեսի» անցած հինգ տասնամյակների գործունեությունը՝ կարելի է վստահաբար արձանագրել. ՀՀ ԳԱԱ հայագիտական այս պարբերականն իր շուրջն է համախմբել մայր հայրենիքի և արտասահմանյան մեծաթիվ հայագետների, արդյունավետ աշխատանք է կատարել իր ծրագրային նպատակներն ու խնդիրներն իրագործելու համար: Այս առումով հատկապես անգնահատելի է հանդեսի գիտակազմակերպչական նշանակությունը, քանզի պարբերականի խմբագրությունն աննահանջ կազմակերպել, ընթացք և ուղղություն է տվել հայագիտական մտքի զարգացմանը: Բարձրագոչ չի հնչի, եթե ասվի, որ հայագետների մի քանի սերունդներ իրենց ինքնահաստատումն են գտել հենց այս հանդեսի էջերում:

«Պատմա-բանասիրական հանդեսը» իրավամբ դարձել է հայագիտական մեծահամբավ հրատարակություն և համընդհանուր ճանաչում ձեռք բերել մեր երկրում ու նրա սահմաններից դուրս: Այսօր անհնար է պատկերացնել հայագիտությունն առանց այս հանդեսի:

50-ЛЕТИЕ “ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКОГО ЖУРНАЛА”

ЗАКАРЯН А. А.

Резюме

В многовековой истории армянской периодической печати свое особое место занимает “Историко-филологический журнал” Национальной Академии наук Республики Армения. На протяжении пяти десятилетий, пройдя трудный и сложный научно-исследовательский, научно-организационный и научно-издательский путь, журнал стал одним из авторитетных арменоведческих изданий, известной школой подготовки научных кадров, успешно выполняя выдвинутые перед ним задачи.

Первый номер нового арменоведческого издания, созданного решением Президиума Академии наук Армении, вышел в 1958 г. Он

открывался вступительной статьей "От редакции", в которой были представлены программные цели и задачи журнала. В редколлегию журнала вошли видные историки и филологи. Главным редактором журнала был назначен именитый историк, вице-президент Академии наук, академик Мкртыч Нерсисян, который свыше сорока лет руководил журналом. После кончины М. Нерсисяна в 1999 г. эта должность была доверена академику НАН РА, видному арменоведу Вардгесу Микаеляну. С уходом В. Микаеляна из жизни в 2005 г. один номер журнала вышел под редакцией доктора исторических наук П. Мурадяна, другой – под редакцией доктора филологических наук Ан. Закаряна. Затем, в 2006 г. редактором журнала был избран известный филолог-фольклорист, член-корреспондент НАН РА Саргис Арутюнян.

Принятая с первого номера журнала и сохранявшаяся на протяжении последующих лет структура – разделы и подразделы – впоследствии подверглась некоторым дополнениям и уточнениям. Материалы журнала публикуются на армянском и русском языках, с приложением резюме на русском, армянском и английском языках. Журнал выходил раз в три месяца, затем – раз в четыре месяца. Вышло 176 номеров, по 15–20 печ. листов, в каждом номере помещено в среднем по 25 материалов, т. е. со дня основания было опубликовано почти 4800 материалов. Журнал распространялся в количестве 1500–2400 экземпляров (ныне–350) не только в Армении, но и за ее пределами. За 50 лет своего существования "Историко-филологический журнал" НАН РА сплотил вокруг себя многих арменоведов со всего мира, провел плодотворную работу по изучению важных вопросов истории армянского народа, литературы, языка, искусства, философии и других областей науки. На страницах журнала освещались также проблемы востоковедения, кавказоведения, историографии и филологии, вопросы истории экономических, политических и культурных связей и взаимоотношений Армении с соседними странами, научной, общественно-политической и культурной жизни армянской диаспоры. "Историко-филологический журнал" превратился в весомое арменоведческое издание и получил признание научной общественности нашей страны и за рубежом. Невозможно представить арменоведение без этого журнала.